

առաջնորդեցէ աջ քո՝ բարձրանալ սովաւ՝ ՚ի վերայ անիրաւաց եւ անհաւատից, զի սպասաւորելով Աստուծոյ՝ վրէժ խնդրեցես յայնցանէ որք զչարն գործեցեն, եւ յորոց ոչ ունիցին զհաւատս Յիսուսի Քրիստոսի. փրկեցես զսուրբ եկեղեցի ՚ի նոցանէ. օգնական լիցիս այրեաց եւ որբոց որ ՚ի սմա. զի լիցիս արժանի ժառանգել զթագաւորութիւն անվախճան, ըստ Փրկչին մերոյ. ընդ որում Հօր միանգամայն եւ Հոգւոյն Սրբոյ», եւ այլն:

Յետ այսր դնեն ՚ի պարանոցն Մանեակ, եւ ՚ի ձեռն՝ Մատանի, եւ արձակեն ՚ի վերայն՝ Փիլոն: Եւ ասէ եպիսկոպոսապետն առ թագաւորն.

«Ա՛ն մատանի՝ առհաւատչեայ արդարութեան թագաւորութեան քո. քանզի այսօր օրհնեալ եւ իշխան եւ թագաւոր ժողովրդեանս. հաստատ լեր եւ օգնական քրիստոնէութեան եւ քրիստոնէից հաւատոյ. զի փառաւորեցիս ընդ թագաւորին թագաւորաց՝ ՚ի յաւիտենական կեանսն. որում փառք յաւիտեանս. Ամէն»:

Տայ յաջ ձեռն Խաչ ՚ի վերայ խնձորոյ ոսկւոյ, եւ ՚ի ձախ ձեռն Գաւազան գորութեան, եւ ՚ի ծայրն ծաղիկ. եւ ասէ.

«Ա՛ն գաւազան գորութեան եւ արդարութեան. զարհուրեցուցես զանիրաւսն, եւ առաջնորդեցես մոլորելոցն, եւ ձգեցես զձեռն քո ՚ի վերայ ամբարտաւանիցն, եւ կործանեցես զնոսա», եւ այլն:

Յետ այսր եպիսկոպոսապետն հանդերձ եպիսկոպոսօքն առնուն զՊսակն մեծաւ պատուով, դնեն ՚ի գլուխ նորա. եւ ասէ.

«Ա՛ն զԹագ եւ զպսակ թագաւորութեան ՚ի գլուխ քո, ձեռօք նուաստ եպիսկոպոսաց, որով պայծառանաս շքեղաշուք վայելչութեամբ՝ յուրախութիւն եւ ՚ի փառս. եւ լուեալ զբանս ճշմարիտս՝ հաւատասցես խորհրդոյ քոյին պատուոյս. քանզի որպէս մեք հովիւք եմք եւ առաջնորդ հոգւոց, նոյնպէս եւ դու դատաւոր մարմնոց, հրամանաւ Աստուծոյ: Սրդ զօրացիր եւ քաջ լեր, փրկել զսուրբ եկեղեցի՝ յամենայն հակառակորդաց. եւ ՚ի մէջ տրաւ կացցես տնտես իմաստուն, եւ յայտնեցիս սիրող իրաւանց ժողովրդեան Աստուծոյ. եւ թագաւորութիւնս՝ որ տուաւ քեզ յԱստուծոյ՝ խորհրդական օրհնութեամբս՝ ՚ի ձեռս առաքելոցն եւ ամենայն Սրբոցն, լիցի քեզ առիթ պսակիլ ընդ փառաւորեալ վկայսն յանվախճան կեանսն, ՚ի Փրկչէն մերմէ Յիսուսէ Քրիստոսէ. ընդ որում Հօր եւ Սուրբ Հոգւոյն վայելէ փառք, իշխանութիւն», եւ այլն:

Եւ հանցէ նմա օրհնութիւն զայս.

«Օրհնեցէ զքեզ Աստուած եւ պահպանեցէ, որ կացոյց զքեզ թագաւոր ՚ի վերայ ժողովրդեան իւրոյ. նոյն ինքն արասցէ եւ զքեզ յաղթող ՚ի վերայ ամենայն թշնամեաց, եւ ժառանգեցուցէ քեզ զյաւիտենական կեանսն»:

Ժողովուրդն. Ամէն: